

նակը չարչարակից նշանաւոր եղբայրներու առեան կաթիլներով ալ գծած է Հայ Գողգոթայի կարմիր տեսարանը, ինչ որ գործին մեծ արժէք կու տայ:

Հա հոն խնամքով ցուցակի առած է անոնց անունները, նահատակութեան վայրերը՝ շատերուն լուսանկարներով, որոնք իմ վրաս այն ազդեցին՝ ինչ որ սիրտ մը կը զգայ՝ երբ կ'անցնի գերեզմանոցի մը կարգ կարգ շարուած շիրիմներուն մէջէն. հոս մարմարեայ կոթող մը՝ վաղամեռիկ որդւոյ մը պատկերով. հոն լացող հեծնապակ մը՝ մօր մը կամ քրոջ շիրմին պլուած. և վերջապէս անպաճոյճ՝ բայց խորհրդակիր խաչ մը, լապտեր մը, կոտրած սիւն մը, տակը՝ հանգչողին մեղամաղձոտ նկարով, որոնք խորունկ հառաչ մը և ջերմ արցունք կը հասնեն անցորդին սրտէն. Հայ գողգոթան ալ գերեզմանոց մ'է, որ շարուած են կողք կողքի մեր սիրելիները: Մեր նահատակաց պատմութիւնը լոկ մորթուածներու սարսուէի պատմութիւնը պէտք չէ ըլլայ, այլ քրիստոնէական կոծրի քաշալաղթ վկաներու դիցազնեղութիւն մը, որ ոչ թէ մեզմէ յուսահատ ճիշեր, արցունք, այլ արտասուախառն յուսախութիւն կը բողբոցեն:

Մայր Հայաստանը Մակաբայեցի առնասիրտ Շամուռնայ պէս քաջութեամբ զոհեց իւր սիրելի գաւակները, բայց չուզեց խոնարհիլ մահիկի դիմաց, կրկնելով իւր ամէն նահատակի բերնով «Սոքր քո և պարաւնոցը մեր: Չեմք ինչ լաւ մեք քան գառալիկան, որ յայտ վիշալքեան վերայ եղի՛ն գիւն և գետաղառած և զմարմինս խշռանց» (Եղիշէ էջ 72-1893):

Կրօնքի և ազգութեան սուրբ սեղանին վրայ ցոյց տուին կորով, և անխախտ սէր՝ առ հայրենի աւանդութիւնները, թէպէտ չարչարուեցան, խաչուեցան՝ տարածելով անմեղ բազուկները հայ լեռանց կողքին:

Այս էր բիւրաւոր նահատակաց հոգին և միակ գաղափարականը, զոր արգոյ հեղինակը քիչ լուսաբանած է, զգալ տալով ընթերցողին՝ գրութեան սրբազան շնչի պակասը, որ էական նկարագիրը պէտք էր ըլլալ գրքին:

«Հայ Գողգոթան» սրբազան վերնագրին տակ գրաւիչ դրուագներ պիտի կազմէին տկար մարմնով՝ բայց անյաղթ հոգով՝ անխախտութեամբ և հաւատաւորութեամբ զէմ ցցուած զգայացուն տարվէպերը:

Պատահածները նման և աւելի են քան նախնի քրիստոնէից քաջածնելը...

Վիպասանական գրութիւն մը որքան բնական

ըլլայ և որքան իրականին մերձենայ՝ այնքան յաջող է. հոս դէպքերը իրականէն ալ անդին են՝ և հեղինակը օգտուելով այս պատճառով, իւր գրութեան կու տայ շատ ձգիչ ոգի մը, հետաքրքրաշարժ և սրտանմղիկ տեսարաններ, մինչև իսկ լացնէն տալով վկայից չարչարանաց միակ ներկայ եղող Հայրենի բոյսերը լեռներն և ձորերը: Խորհրդաւոր գլխակարգութիւններով և ժամանակագրական կարգաւորութեամբ թէ՛ պատմաբանին, թէ՛ վիպասանին համար հաճելի և փրշտուած գործ մ'է:

Մինչև հիմայ Հայ և օտար ողբերգակներ և վիպասանները ցնորբաբաններ էին մեծաւ մասամբ: Միլիոնաւոր հայերու դիցազնական նահատակութիւնը այսօր լիառատ նիւթ մատակարարեց բոլոր աշխարհի մատենագրութեան: Ուր այդ կորովի և բարոյալից ցեղին որդւոց մաքուր և դիցազնական նկարագիրը միայն՝ պիտի կարենայ մաքրել դարուս գրիչներու աղտոտ վէպերը:

Պալաքեան Գեր. Վարդ. առաջին գեղեցիկ օրինակ տուողներն է, որուն գործը անշուշտ ձեռքէ ձեռք կը խլուի, և մենք անձկանաք կը սպասենք «Հայ Գողգոթան»ի Բ. հատրդի գեղեցիկ արշալոյսին:

Հ. ՎԱՅՆ ԳՈՎԱՆԻՍԵԱՆ

## ԱՅԼԵԻԱՅԻ

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԱՍՏԵՐՆԵՐ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Անցեալ դեկտ. 28ի թուի երկինքը, ամայի բնութեան մաղձոտ տեսիլն ու մշուշապատ հորիզոնը բնաւ ակնկալուածիւն մը չէին ներշնչեր՝ թէ պիտի հիւրամեծարէինք զոյգ երեւիլ Հայաստանները՝ Ամերիկեան Նպաստամատոյցի ընդհանուր Նախագահն ու Պորտ ընկերութեան Քարտուղարը Տոքթ. Ճէյմս Պարթըն, և Պուսոյ Նպաստամատոյցի Պետն ու Պորտ ընկերութեան անդամ Տոքթ. Բիթթ:

Անոնք հազիւ լուանէն վնաստիկ հասած՝ ազնուօրէն իրենց առաջին ողջոյնն

ու այցելութիւնը փափագած էին Ս. Ղազարու տալ:

Յերեկուան ժամը Յին էր. յետ քանի մը փոխանակուած քաղաքավարական բառերու հասկցուած էր՝ որ խիստ կարճատև պիտի ըլլար անոնց յարգելի ներկայութիւնը քաղաքի մէջ. անմիջապէս յաջորդօր պիտի մեկնէին դէպ ի գոյրը և Պոլիս, ու պիտի վերադառնային լոգան՝ հաղորդելու իրենց մասնաւոր առաքելութեան դերիւնքը:

Այցելութիւնն սկսած էինք՝ երբ յանկարծ հաճեալի անակնկալի մ'առջև գտնուեցանք. Տոքթ. Պարթըն անոյշ ժպտով ու պարզութեամբ մը սկսաւ մեր լիզուով աճապէս ըսել. « Ես ալ քիչ մը հայերեկեկ եր խօսիմ. եօթը տարի աշեկը Խաչատրեանի կողմերէ, իսկ երեսուն տարի է՝ որ հայերեկեկ չեմ խօսած և հիմա քիչ գիտեմ »: Երբ կը փափագէինք վերադառնալ ո՛ր ժամուն հասած ըլլալին իմանալ՝ պատասխանեց. « Ինձ ժամ մը ետք եղած է հասնելիս. հագիս փոխադրեալս Hôtel Regina վար դրիք ու դեռ խաչերեկեկ անգամ չտեսած՝ փութադիրք մեր անդրանիկ ողորդը Ս. Ղազարոս քերէ »:

Անտարակոյտ սոյն ազնիւ մտածութիւնը՝ զոր ի գործ դրած էին մեր նշանաւոր Հիւրերը՝ շատ աւելի յարգի, պատուաբեր և իմաստալից դարձուցած էր մեզ իրենց այդ թանկագին այցելութիւնը:

Մեծ շահագրգռութեամբ այցելելով վանքիս զանազան մասերը՝ ինչպէս Եկեղեցի, Գրատուն, Թանգարան, Բն. Գիտութեանց Դահլիճը, Տպարանն ու պարտէզը՝ յայտնեցին ջերմ գոնահալութիւններ: Ապա պատուաւորութեան Հիւրանոցին մէջ և տեղի ունեցան սիրալիւր և շահագրգռող խօսակցութիւններ՝ միշտ մեր ազգին ներկայ վիճակին շուրջ...

Ժամանակներն կարճ էր սակայն. հակառակ իրենց փափագին՝ պիտի չկարենային այցելել և ոչ Ֆիէստայի մեր «Բենեֆի. ժե.» Որբանոցը. գոնէ նոյն դժուարութիւնը չկար համառօտ այցելութեամբ մը պատուելու Մ. — Ռ. Վարժարանը՝ ուր — յետ

վանքիս այցելութեան — առաջնորդած էինք մեծանուն Հայաստանցիներ:

Հոն ընդունուեցան Հ. Գ. Վ. Նահապետեանի և ամբողջ Գարդգական Մարմնոյն կողմանէ: Յետ տեսչութենէն ուղղուած բարի գալտեան և շնորհակալութեան բառերուն՝ պատուաւորութեան հիւրերը, և ապա ընկերակցութեամբ վարդապետաց առաջնորդութեան ելեքտրական ջահերով լուսազարդ Դիէֆուրեան Դահլիճը. հոն հաւաքուած էին վարժարանին աշակերտները՝ որ ծափողոյններով ընդունեցան զանոնք: Տոքթ. Պարթըն հայերէն քանի մը խօսքերով մաղթեց՝ որ ըլլան անոնց Հայ Ազգին պատուաբեր և օգտակար անդամներ: Յետոյ ի պատիւ պատկանելի դէմքերուն՝ վշտաթաթախ սրտերէ միաբերան լսուեցաւ « Մեր հայրենիք բշտառ անտէր »: Այնքան յուզիչ էր տպաւորութիւնը՝ որ կարծես աւելի ևս սրելու համար էր անոնց անձնանուէր գործունէութիւնը՝ շատ աւելի հատու դառնալու՝ ի դարման մեր ազգային թշուառութեան: Հիւրերը գոհ և ուրախ էին եղած ընդունելութենէն, և հուսկ ցաւ կը զգային որ ստիպուած շուտով պիտի բաժնուէին հայանուէր Հաստատութենէն՝ զոր այնքան միացեալ գտած էին իրենց դիտաւորութեանց ու փափագներուն, որ էր Հայոստանի ծառայելը:

Յոյժ ցանկալի էր սակայն՝ պաշտօնական ընդունելութեամբ մը պատուել Հայութեան այդ առաքեալները, բայց տրամադրելի ժամանակն էր որ կը պակսէր. յաջորդօր Տոժերու Քաղցին հիւր չէին մնար այլևս. ինչ ընել ուրեմն, Բարեբախտութեամբ պիտի ըլլար՝ եթէ շոգենաւր երեկոյ մեկնէր:

Ու չուշացաւ փորձը: Նոյն երեկոյ իսկ հեռաձայնով ժամադրութիւն ընդունուած էր երկրորդ առտուան համար՝ փոխադարձ այցելութիւն մը տալու դիտմամբ:

Ուստի հետեւեալ առաւօտ Միաբանութեան Աթոռակալ Վ. ք. և Ընդհ. Քարտուղարը ընկերակցութեամբ Մեծապատիւ Տիար Արտաշէս Մկրտչեան (ժանօթ և մտերմ Տոքթ. Բիթի) գնացին Regina

պանդուկը, Մի և նոյն ժամուն հոն կը հասնին Մ. — Ռ. Վարժարանէն Տեսուչ և Փոխ-Տեսուչ Վ. Ները և տեսակցութիւնը շատ սիրալիր կերպով տեղի կ'ունենայ:

Յետ այցելութեան՝ Գարտուղար Վարդապետը և Պ. Սարգիս Մկրեան կ'ընկերակցին Տոբթ. Պարթընի՝ շոգենաւի մեկ-նումին ժամը տեղեկանալու համար: Եւ ասա ճշմարիտ բարեբախտութիւն մը. շոգենաւը պիտի մեկնի եղբր նոյն երեկոյ ժամ Տին: Ուրեմն ամէն ինչ նպաստաւոր է ի գործ դնելու մեր դիտաւորութիւնը: Կը հրաւիրուին անմիջապէս Հիւրերը՝ երեկոյեան ժամ Ծին Մ. — Ռափայելեանին մէջ՝ ի պատիւ իրենց՝ պաշտօնական թէյասեղանի մը, պաշտօնապէս յայտնելու համար Հայութեան սրտագին շնորհակալութիւնները այդ պերճափայլ Հայաստաններուն, և իրենց միջոցաւ՝ Ամերիկեան մարդասէր ազգին:

Երեկոյեան ժամ 4 1/2 լին Մ. — Ռ. Վարժարան կը հասնին Տոբթ. Պարթըն և Տոբթ. Բիթ առաջնորդութեամբ Պ. Ս. Մկրեանի, որ ամբողջ օրը առաջնորդ եղած էր անոնց:

Սեղանին զլուսը կը բազմին երկու Հայաստանները. հոն Միաբանութիւնս ներկայացուցիչ ունէր Մեծարդոյ Հ. Յովհաննէս Աթոռակալ Վ. և Ընդհ. Գարտուղար Հ. Յ. Աւգեր. հոն էր նաև «ԲԱԶՄԱՎԷՊ»ի խմբագրութիւնս, նաև իբրև ներկայացուցիչ Հայ Մամուլի երախտագիտութեան հետաւոր արծազանգներուն: Բաց ի Վարժարանիս վարդապետներէն՝ ներկայ էին Տիարը Արտաշէս և Սարգիս Մկրեանը, Տիկին և Օրհորդ Սիրվարդը, Տոբթ. Թորգոմեան, և այլն:

Թէյասեղանի պահուն Մեծ Դահլիճէն կը լսուէր Նուագախումբը՝ ի պատիւ զոյգ Հայաստաններուն:

Բաժակաճառերուն սկիզբ տուաւ Վարժարանին Տեսուչը. նա մեծարանքի ջերմ արտայայտութեանց հետ հիւսեց ամբողջ Հայութեան խորին երախտագիտութիւնը՝ ներթողելով մեծապանծ Երկրին օրինակելի մարդասիրութիւնը, զոր այսպէս ցոյց կու

տան իրենց հսկայ գործունէութեամբ մը՝ ի նպաստ մեր տարաբախտ անթիւ բեկորներուն, այսու դառնալով Աւետարանի ճշգրիտ Սամարացիներ: Փակեց խօսքը՝ կատարեալ յաջողութիւն մաղթելով իրենց գործերուն, խնդրելով միանգամայն որ հաճին թարգման հանդիսանալ Ամերիկայի առջև մեր անհուն երախտագիտական զգացումներուն, զոր ազգովին կը տածենք սրտերնուս մէջ: Բաժակաճառիս անգղիերէն թարգմանն էր Տիար Ա. Մկրեան:




Տոբթ. Ծէյմս Պարթըն

Ընդհ. Նախագահ Ամերիկեան Նպաստամատոյցիմ

Բնականաբար սրտերնուս ծածուկ փափազն էր այլևս՝ Տոբթ. Պարթընի ձայնը լսել այժմ մեր իսկ բարբառով: Ուստի անանկալ մը չեղաւ՝ երբ ոտք ելաւ պատկառելի ծերունին, և ամենուս հետաքրքրութեան մէջ՝ իմաստալից ու գողտրիկ բաժակաճառ մը խօսեցաւ հայերէն, որուն սկզբնատուրութիւնն այսպէս էր. «Իմ հայերէնս շատ ծեր է. երեսուն տարուան է. ինձ այնպէս կը բոխի քե ընտանեացս մէջն եմ: Պարտք կը համարիմ շնորհակալ ըլլալ այս գեղեցիկ ընդունելութեան համար՝ զոր ըրիք ի պատիւ Տոբթ. Բիթի և Ինծի: Ճիշդ է, Ամերիկա շատ շանքեր քահեց Զեր Հայրենիքին համար ու զեւ պիտի քահե: Ան

մինչև անգամ գոհեր տուաւ արեւելքի մէջ իր ընտիր որդիներէն: Մեր Հայրենիքը մոտորած է՝ որ եթէ գոհացում չտանէ՝ դրսւմ անկան տեսակետով պիտի զանայ օգնութիւնը հակառակորդին...»:

Տօքթ. Պարթևնի բաժակաճառը ծափերով վերջացաւ: Իրմէ ետքը Տօքթ. Բիթ խօսեցաւ իր մայրենի լեզուով՝ զոր հայերէն կը թարգմանէր Պ. Ս. Մկրեան. ի մէջ այլոց՝ «Այս հաճելի հասարոյթը —



Տօքթ. Ուիլլիամ Բիթ

վերատեսուչ Պոլսոյ Ամերիկ. Նպաստամատոյցին

ըսաւ — իմ վրաս ալ մի և նոյն տպաւորութիւնը գործեց, իբր թէ գտնուէի թո՛ւն իսկ իմ ընտանեկան յարկիս մէջ: Ստոյգ է, Հայ Ազգին կրած առաքապանքներու յոռտուս՝ մին նուիրուած է Ամերիկեան Ազգը: Եւ, ինչպէս նաև Տօքթ. Պարթըն, ծնած ճերթի Մասսաչուսից, Ամերիկայի այն մասին մէջ՝ որ Նոր Անգլիոյ կը կոչուի. ձևացած է անիկա ձեզ նման հալածուած ժողովրդէ մը. այսօր ազատ է այն. ես կը մղարեմ որ զայ այն օրը ձեզի համար այ...». բուն ծափահարութիւնը ողջունեցին ազնիւ Հայաստանի խանդավառ խօսքերը, որոնց թարգմանն էր Պ. Ս. Մկրեան, որ ապա

ինքն ալ շատ զգայուն շեշտով գեղեցիկ անգղիերէն ուղերձ մ'ըրաւ. խօսեցաւ նաև Տօքթ. Թորգոմեան:

Ժամը 7 էր. պիտի լուծուէր գեղեցիկ երեկոյթը՝ անլուծանելի թողով սրտերու խորերը օրուան քաղցը յիշատակը:

Հրաժեշտի ժամն էր. Վարժարանի աշակերտը շարուած էին սրահին մէջ, Թանկագին Հիւրերը սիրալիւ խօսքերով կ'ողջունէին զանոնք մի առ մի: Հուսկ ընկեալակցութեամբ բոլոր ներկայից և աշակերտաց՝ առաջնորդուեցան անոնք զէպ ի կոնսուլ, ուր մտան՝ յետ սրտագին շնորհակալութեանց և ողջոյններու: Նաակը կը սահէր, մինչ քարափէն ծափահարուած թիւնը կ'ընկերէին անոր: Յուզուած կը թուէին Հիւրերը. զխարկով ու ձեռքի շարժումով կը յայտնէին իրենց ողջոյններն ու գոհունակութիւնը, մինչև որ նաակը լուսեղէն ալիքներու անմանէն դուրս սահնդով՝ անյայտացաւ գիշերային աղջամուղջին ծոցէն... զէպ ի Հայութեան աղետավայրը մեկնող շողեհաւր...:

Ահա ուրեմն Հայութեան ճշմարիտ և անկեղծ բարեկամները, ճշմարիտ բարեխօսները, ճշմարիտ բարեւարները:

Եւ մենք այսուհետև ամէն անգամ որ լսենք Ամերիկեան Նպաստամատոյցի մէկ նոր ձեռնարկը՝ մեր որբերու փրկութեան և Հայ Ազգիս ընդհանուր բարեկաման գործին՝ ապահով պիտի ըլլանք որ անոնք անպատճառ ներշնչուած են զլիաւորապէս այս անգուգական զոյգ ազնիւ սրտերէ: Կը նշանակէ այս՝ որ անոնք ընդ միշտ մեր երախտագիտութեան առարկայ դարձած են:

Ճիշդ այս իմաստով նաև յօդուած մը տեսանք վերջերս Պոսթընի մէկ նոր «ՊԱՅՖԱՐ» հայաթերթին մէջ՝ «Հայ Դատին Ամերիկացի քարեկամները» վերնագրով՝, ուր կը գրէր.

«Սակայն պէտք է խոստովանիլ որ երբեմն ժլատ գտնուած ենք մեր ազգային երախտագիտ.

տուութիւնը յայտնելու մէջ մեր այն Ամերիկացի բարեկամներուն՝ որոնք այս պահուստ օգտակար ծառայութիւն կը մատուցանեն Հայկական դատին լօզանի ժողովին մէջ, և՛ անկարկենք Տոքթ. Պարթընի, Տոքթ. Փիթի, Ամերիկեան միսիօնարութեան այս երկու կարևոր անձնակորուքեանց, որոնց հանգէպ Հայ ժողովուրդը մեծագոյն յարգանքն ունեցած է՝ երբ նոյն իսկ քննադատած է միսիօնարներէ ոմանց քաղաքական անհեռատեսութիւնը:

Տոքթ. Պարթըն և իր պաշտօնակիցները նախապէս Մերձավոր Արեւելքի հարցին հանգէպ բնեցին զիրք մը՝ որ պատճառ դարձաւ Միացեալ Նահանգներու Թուրքիոյ դէմ պատերազմ չ'այտարարելուն... »:

Իսկ Տոքթ. Փիթ ներկայացուած է թէ

« աւելի դրական միտք մըն է, ըլլալով կարող ֆինանսագէտ և ճանչնալով Թուրքը այնպէս՝ ինչպէս շատ քիչ Եւրոպացիներ և Ամերիկացիներ զայն ճանչցած են, առանց երբեք պատրուելու Թուրքերու շողոմոդ և փայլուն դրսեմետութեն... »:

« Տոքթ. Պարթըն և Տոքթ. Փիթ բացարձակապէս համոզուեցան որ... խաղաղութեան վերջնական և տեական հաստատութիւնը, մինչև անգամ քրիստոնեայ աշխարհին շահերը կը պահանջէին որ Թուրքահայաստանը ազատագրուէր »:

Ինչպէս կը տեսնենք՝ դադար չունին բնաւ այս հոյակապ անձնակորութեանց հայանպաստ ջանքերն ու մտահոգութիւնը՝ զորս ուղղած են մեր սերունդի ազատագրումին՝ որուն հաւաստիքներն անպակաս են:


Պոլսական մամուլէն հաղորդուեցաւ վերջերս թէ Տոքթ. Պարթըն՝ Տոքթ. Բիթի հետ Պոլիս հասնելէ վերջ՝ իր տրամադրելի օրերուն մէջ Հայ որբերու և գաղթականներու վիճակին նկատմամբ ձեռնհաս իշխանութեանց հետ խորհրդակցութիւններ կատարած է՝ վերադառնալէ առաջ, և խոստացած է՝ իրը պետ Ամերիկեան Նպաստամատոյցի՝ Պոլսէն փոխադրուած որբերու վիճակին բարելաւման համար հարկ եղածն ի գործ դնել:

Ու դեռ բոլորովին նոր է այն լուրը, ինչպէս կ'արձագանգեն ուրախութեամբ

հայ լրագրները, թէ Տոքթ. Պարթըն Լոզան վերադառնալու պահուն երբ Բարիզէն կ'անցնի՝ զաղափարի փոխանակութիւն մը կ'ունենայ Ազգ. Պատուիրակութեան Նախագահին հետ, « յոծեկոյ համար մեր թուր որբակոցներու միօրինակ և ազգային կրթութիւն մը տալու հարցը »:

Եթէ յաջողին իրագործել այս սքանչելի ծրագիրը՝ փրկելով մեր ցիրուցան որբերը օտարսևալու ամէն տեսակ վտանգներէ՝ անտարակոյս յաջողը դարբերու մէջ իրաւամբ բովանդակ Հայութեան ամենամեծ բարեբարները պիտի նկատուին ՏՌՔԹ. ՊԱԹԸՆ և ՏՌՔԹ. ՓԻԹ, ինչպէս նաև իրենց բոլոր համախոհ զործակիցները:

ԽՄԲ.



## ԿՈՅՐԵՐՈՒ ԵՐԱԶՆԵՐԸ

Երազիկ յնադարձանքը. — Ի՞նչ ճանչնանք սեր ներքին գիտակցութեան վիճակը, որ զաղափարաց յարակցութեան նկատմամբ իր անհուն հնարակորութիւններով աղբիւր է երազին ինքնագիւտ պատկերներուն. գիտենք նաև որ արթնութեան ժամանակ մեր տեսութեանց ասպարէզը կ'ամփոփուի մեր զգայարաններով:

Արթնութեան ժամանակ մեր գործերն և խորհուրդներն անձամբ կ'ենթարկենք ըննադատութեան և ըննութեան, որպէս զի խուսենք կամ առջևն առնենք ուրիշներուն ըննադատութեան. բայց այսու նորէն գերի կ'ըլլանք մեր շրջակայից կարծեաց և ըննադատութեանց: Երազին մէջ կացութիւնը բոլորովին հակառակն է. երազին մէջ ամենայն ինչ ներելի է. կրնանք սպաննել ըստ մեր հաճոյից այն անձինքը՝ զոր կ'ատենք. փառաւորել այն անձինքը՝ որ մեզի համակիր են՝ միլիոններու տէր ըլլալ կամ մուրացիկ. զանգակատունէն գլխիվայր իյնալ և սոք ելլել ու շրջապայութեան հրթալ: Երազին